Բացահայտիր քեզ համար Աստծո ծրագիրը՝
Խաղաղություն և կյանք

1

Աստված ուզում է, որ մենք երջանիկ ապրենք այստեղ և հիմա: Ինչո՞ւ ուրեմն մարդկանց մեծ մասը չգիտի, որ հենց դա է իրական կյանքը:

Աստված սիրում է բոլոր մարդկանց և սիրում է քեզ: Նա ուզում է, որ քո սրտում զգաս Նրա հանգիստը և երջանիկ լինես քո բոլոր գործերում: Հենց սա է հանդիսանում Աստծո և մարդկանց հետ ներդաշնակ կյանքով ապրելու գաղտնիքը:

Մեջբերում Աստվածաշնչից՝

Որովհետև Աստված այնպես սիրեց_____ (քո անունը), որ Իր միածին Որդուն տվեց, որ ով Նրան հավատա, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա.

Հովհաննես 3.16

Այս տողերում ,աշխարհ բառի փոխարեն գրեք ձեր անունը _____

Խնդիրը՝
Բաժանում Աստծո և մարդու միջև

2

Մեր մեղքի պատճառով տեղի ունեցավ բաժանում Աստծո և մարդու միջև:

ՄԱՐԴ ԱՍՏՎԱԾ

Աստված մարդուն ստեղծեց, քանի որ ուզում էր փոխհարաբերություն ունենալ մեզ՝ մարդկանցս հետ: Նա մեզ զարմանալիորեն գեղեցիկ կյանք է պարգևել: Նա մարդուն չստեղծեց որպես ռոբոտ, որը մեքենայաբար կենթարկվեր ու կսիրեր Իրեն: Աստված մարդուն ազատ կամք տվեց, և դրա հետ միասին՝ նաև ազատություն՝ կայացնելու սեփական որոշումները: Վերջիվերջո, դա է հանդիսանում բոլոր ընկերական փոխհարաբերությունների հիմքը:

Առաջին մարդը որոշեց գնալ սեփական ճանապարհով, և հիմա բոլոր մարդիկ ստիպված են առերեսվել այդ արարքի հետևանքների հետ, որը կոչվում է մեղք: Դրա բառացի իմաստն է՝ վրիպել, չհասնել նպատակինե: Մարդը վրիպեց՝ չհասնելով իր նպատակին, և զրկվեց Աստծո հետ ընկերությունից: Այսպիսով, Աստծո հետ ունեցած կյանքը կորսվեց: Աստծուն և մարդկանց բաժանում է մի անդունդ, որը մարդիկ չեն կարողանում հաղթահարել սեփական ուժերով:

Աստվածաշունչն ասում է՝
Քանի որ բոլորը մեղավոր են, դրա համար էլ զրկված են...: Հռոմ. 3.23


3
Հարյուրամյակների ընթացքում մարդիկ ձգտել են հաղթահարել Աստծո և իրենց միջև եղած տարածությունը: Սակայն ոչ եկեղեցի հաճախելը, ոչ կրոնական կյանք ապրելը, ոչ էլ բարոյական բարձր չափանիշները չկարողացան այդ հարցում օգնել: Այդ անդունդն անհաղթահարելի էր:
ՄԱՐԴ
ԱՍՏՎԱԾ
Գոյություն ունի այս խնդրի միայն մեկ լուծում:
Կրոն
Բարոյականության բարձր չափանիշներ
Բարի գործեր
Եկեղեցի հաճախել
4
Աստվածային լուծումը՝ Հիսուս Քրիստոս:
Աստված Ինքը հոգ տարավ այդ մասին և գտավ ՄԻԱԿ ելքը: Յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում՝ գնա՞լ այդ ճանապարհով, թե՞ ոչ, հավատա՞լ ճշմարտությանը, թե՞ ոչ, փնտրե՞լ Աստծուց տրված կյանքը, թե՞ ոչ:
ՄԱՐԴ
ԱՍՏՎԱԾ
ՀԻՍՈՒՍ


Վերջապես, Աստված Ինքը դարձավ այդ լուծումը: Նա աշխարհ եկավ Հիսուս Քրիստոս մարդու տեսքով, Ով հաղթահարեց Աստծո և մարդկանց միջև եղած անդունդը: Հենց դրա համար Նա եկավ աշխարհ: Նա խաչի վրա արժանացավ դաժան մահվան՝ կրելով մեր մեղքերի պատիժը: Այս կերպով Հիսուսը հաղթահարեց Աստծուն և մեզ բաժանող անդունդը:
Աստվածաշունչն ասում է՝ Քրիստոսը մահացավ մեզ համար, երբ դեռ մենք մեղավոր էինք, և դրանով Աստված ցույց տվեց, թե որքան մեծ է Իր սերը մեր հանդեպ:
Հռոմեացիների 5.8
Դրանից մի փոքր առաջ Հիսուսն ասում է. Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը: Ոչ ոք չի գա
Հովհաննես 14.6
5
Ո՞ր մեկին եք Դուք պատկանում
Այստեղ,
թե՞ այստեղ
Ո՞ր մեկը Դուք կընտրեիք
ՄԱՐԴ
ԱՍՏՎԱԾ
դժբախտությունը բաժանում զսպվածություն մեղք սահմանափակումները
սիրել ներում խաղաղություն առատ կյանքը ապրում են հավերժ
ՀԻՍՈՒՍ

Այս աշխարհի բոլոր մարդիկ ծնվում են մեղավոր: Եթե Դուք ոչինչ չեք անում, ապա Դուք նույնպես հավիտյան բաժանված կլինեք Աստծուց: Սակայն կյանքի ընթացքում Աստված Ձեզ հնարավորություններ է տալիս՝ որոշում կայացնելու Նրա հետ կյանք ունենալու օգտին: Եթե Դուք հավատում եք, որ Հիսուսը մահացել է Ձեր մեղքերի համար, իսկ հետո հարություն է առել, Դուք անկեղծորեն ընտրում եք Աստծուն: Դուք ընտրում եք ոչ թե Ձեզ, այլ Աստծուն: Դա Ձեր ողջ կյանքի ընթացքը վճռող մի որոշում է, քանի որ երբ ընտրում եք Աստծուն, Նա Ձեզ ընդունում է որպես Իր զավակ (որդի կամ դուստր)՝ դառնալով Ձեր Հայրը: Դուք Նրա որդին կամ դուստրը դառնում եք ոչ թե մկրտությամբ, մեռոնօծությամբ կամ բարի գործերով, այլ դառնում եք Աստծո զավակ (որդի կամ դուստր) այն բանից հետո, երբ խնդրում եք Հիսուսին գալ Ձեր սրտի մեջ: Երբ Հիսուսն ընդունում է Ձեզ, Դուք ստանում եք մեղքերի թողություն: Այժմ Դուք կարող եք ապրել երջանիկ կյանք առանց վախի ու տագնապի, քանի որ Ձեր կյանքում կա Մեկը, Ով Ձեզ կառաջնորդի ողջ կյանքի ընթացքում:

Սա մենք անվանում ենք հավատի կյանք: Հավատ՝ նշանակում է հավատալ այն ամենին, ինչ Նա ասում է: Հավատալ, որ այդ ամենը ճիշտ է: Մենք պետք է վստահենք Հիսուսին և Նրան անձամբ ընդունենք մեր կյանքի մեջ որպես Տեր և Փրկիչ:

Նվիրիր ինքդ քեզ Աստծո ծրագրին

Աստվածաշունչն ասում է՝
Ովքեր ընդունեցին Իրեն և հավատացին Իրեն, Նա
Հովհաննես 1.12

Հարց՝
Դուք ունեք ծանրակշիռ որևէ պատճառ հենց հիմա Հիսուսին (Ձեր կյանքի մեջ) չընդունելու համար:

Ի՞նչ է նշանակում ընդունել Հիսուսին:

1. Խոստովանել, որ Դուք մեղավոր եք և բաժանված Աստծուց:
2. Հավատալ, որ Աստծուն գալու համար Դուք Հիսուս Քրիստոսի կարիքն ունեք:
3. Խնդրել Հիսուսին՝ մուտք գործել Ձեր սրտի մեջ:
4. Շնորհակալություն հայտնել Աստծուն Հիսուս Քրիստոսի թափած արյան համար, որով Ձեր մեղքերը մաքրվեցին:
5. Ասել Աստծուն, որ Դուք ուզում եք հետևել Նրան հետագա ողջ կյանքի ընթացքում:

Աստծուն ուղղված Ձեր աղոթքը կարող է այսպիսին լինել՝
Տեր Աստված, ես հիմա հասկանում եմ,
որ մեղավոր եմ և Քո ներման կարիքն ունեմ:
Ես նաև հասկացել եմ, որ Հիսուս Քրիստոսը
մահացել է ինձ համար, իսկ հետո էլ՝
հարություն առել:
Ես պատրաստ եմ հրաժարվել իմ կյանքի
նախկին ապրելակերպից:
Ես աղոթում եմ, որ Հիսուս Քրիստոսը գա իմ կյանքի
և սրտի մեջ, որպեսզի ես կարողանամ հանդիպել
Քեզ՝ Իմ Հորը, և ճանաչեմ Քեզ:
Քո օգնությամբ, ես պատրաստ եմ հնազանդությամբ
հետևել Հիսուս Քրիստոսին՝ ընդունելով Նրան
որպես իմ Տերը և Փրկիչը:

Ամեն:

Եթե Դուք ուզում եք խոսել այս գրքույկում քննարկված թեմաներից որևէ մեկի շուրջ, ապա դիմեք այն մարդուն, ով այն տվել է Ձեզ: Նա ուրախությամբ Ձեզ կօգնի քայլել Աստծո հետ խաղաղության ճանապարհով:

www.gabbertijd.nl
is veranderd ALSO English